ԳԼՈՒԽ ԹԱ.

Յովհաննէս եպիսկոպոս Կարբեցի։ Դարձ Պողոսի Էջմիածնէ։ Գժտութիւն ազգին։ Միաբանութիւն և խորհուրդ վասն Աթոռոյն Երուսաղէմի։ Հրաւէր Վարդապետաց ոմանց ի Թագաւորական քաղաքն։ Ընտրութիւն Պողոսի ի Պատրիարք Կոստանդինուպոլսոյ։ Վախճան Թէոդորոս Պատրիարքի։ Ազգային ժողով ի Կոստանդինուպոլիս։ Կուսակալ Դամասկոսի և Քաղաքապետ Երուսաղէմի։

Յովհաննէս եպիսկոպոս Կարբեցի հրամանաւ Եփրեմ Կաթուղիկոսին Էջմիածնի, կարեւոր և ազգօգուտ գրեամբք եկն եհաս 'ի կողմանս Եւդոկիոյ, ուր իմացեալ զիսոփոխութիւն Պատրիարքին Կոստանդինուպոլսոյ՝ դնաց 'ի Կիսարիա, և անտի գրեալ ծանոյց ոմանց 'ի գլխաւորաց ազգին զգալուստ իւր, և նոքա գրեցին առ նա մնալ 'ի Կիսարիա, և յայտ առնել ինքեանց թէ վասն որոց իրաց եկեալ իցէ։ Եւ նորա գրեալ եցոյց նոցա զխնդիր իւր, եւ էին այսոքիկ, «1°. Ի սենեակն Լօնճայի յատկացուցանել զոք յազգէն գործակատար Էջմիածնի։ 2°. Ընտրել զարս երիս ժողովել և տնօրինել զարդիւնս և զծախս Էջմիածնի, և այլ ամենայն վանօրէից, բաց յԵրուսաղէմէ, և զյաւելեալն պահել զգուշութեամբ։ 3°. Մասնաւոր վանօրէից կառավարիլ արդեամբք թէմի իւրեանց, և մի ելանել և շրջիլ յայլ տեղիս և խնդրել նպաստս։ 4°. Զերկուս յաջորդս պահել Կաթուղիկոսին Էջմիածնի՝ զի 'ի վախճանել նորին, վիճակաւ ընտրեսցի մին և օծցի 'ի Կաթուղիկոս ամենայն Հայոց։ 5°. Տպագրիլ կանոնական բանից Դանիէլի Կաթուղիկոսի, զոր գրեալ է յարգելանս Մարաղայի վասն բարեկարգութեան Աթոռոյն Էջմիածնի։ 6°. Ի Կաթուղիկոսական պէրաթն Օսմանեան տալ յիշատակել և զանուն Սինոդին, որպէս յիշեալ է 'ի հրովարտակս Ռուսաց և Պարսից։ 7°. Եպիսկոպոսունք սակաւ լիցին 'ի մէջ ազգին, բաց յԷջմիածնէ եւ յԵրուսաղեմէ, զի մի ձեռնադրութեամբ նոցին ելցեն անարժանք 'ի կարգ Քահանայութեան։ 8°. Ժողովարարք մի շրջեսցին առանց կոնդակի Կաթուղիկոսին և Պատրիարքին Կոստանդինուպոլսոյ, և մի շրջեցուսցեն ընդ ինքեանս զմասունս սրբոց։ 9°. Ձեռնադրել առաջնորդաց քահանայ 'ի